# «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և ««Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծեր

**Ն Ա Խ Ա Գ Ի Ծ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՕՐԵՆՔԸ

### ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.**Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք)123.1-ին հոդվածի 2-րդ մասի,123.5-րդ հոդվածի 10-րդ մասի և 126-րդ հոդվածի 1.1-ին մասի սանկցիաները լրացնել «, իսկ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող անձի նկատմամբ՝ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով» բառերով:

**Հոդված 2.** Օրենսգրքի 123.5-րդ հոդվածի 4-րդ մասի, 124-րդ հոդվածի 31-րդ մասի և 126-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերի սանկցիաները լրացնել «, իսկ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող անձի նկատմամբ՝ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով» բառերով:

**Հոդված 3.** Օրենսգրքի 123.5-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբնոր 17-րդ մասով.

«17. Սույն հոդվածի 16-րդ մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝

առաջացնում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկում՝ մեկ տարի ժամկետով, իսկ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող անձի նկատմամբ՝ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով։»։

**Հոդված 4.** Օրենսգրքի 124.4-րդ հոդվածի 5-րդ մասի սանկցիան լրացնել «, իսկ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող անձի նկատմամբ՝ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով» բառերով։

**Հոդված 5.** Օրենսգրքի 126-րդ հոդվածի 3-րդ մասի սանկցիան լրացնել «, իսկ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող անձի նկատմամբ՝ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով» բառերով, իսկ 5-րդ մասի սանկցիան՝ «իսկ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող անձի նկատմամբ՝ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրհիսնապատիկի չափով» բառերով։

**Հոդված 6.**Օրենսգրքի 135.2-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Տրանսպորտային միջոցի (բացառությամբ սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված տրանսպորտային միջոցների) վարորդի կողմից տրանսպորտային միջոցի ընթացքի ժամանակ ծխախոտային արտադրատեսակ կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչներ օգտագործելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթնապատիկի չափով, տուգանային միավորի կիրառում՝ 1 միավոր։»։

**Հոդված 7.**Օրենսգրքի 310-րդ հոդվածում՝

1)2-րդ մասը «տասնհինգօրյա ժամկետում,» բառերից հետոլրացնել «իսկ սույն օրենսգրքի 123.1 հոդվածի1-ինև 2-րդ մասերով և 140 հոդվածի 5-րդ մասով նախատեսվածիրավախախտումներիկատարմանդեպքում սույն օրենսգրքի 288-րդ հոդվածով սահմանված ժամկետում վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատ չներկայացվելուց հետո՝ երեսնօրյա ժամկետում,» բառերով,

2)5-րդ մասի «123.1 հոդվածիերկրորդևերրորդմասերով, 140,» բառերը փոխարինել «սույն օրենսգրքի 123.1 հոդվածի1-ինև 2-րդ մասերով, 140 հոդվածի 5-րդ մասով,» բառերով։

**Հոդված8.**
Սույնօրենքնուժիմեջէմտնումպաշտոնականհրապարակմանօրվանհաջորդողտասներորդօրը։

**Ն Ա Խ Ա Գ Ի Ծ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.**«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2019 թվականի դեկտեմբերի 9-ի ՀՕ-300-Ն օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասում «2020 թվականի սեպտեմբերի 1-ից» և «Մինչև 2020 թվականի սեպտեմբերի 1-ը» բառերը փոխարինել համապատասխանաբար «Հայաստանի Հանրապետության ոստիկանության Պարեկային ծառայության ամբողջական ներդրման օրվանից» և «Մինչև Հայաստանի Հանրապետության ոստիկանության Պարեկային ծառայության ամբողջական ներդրումը» բառերով:

**Հոդված 2.**Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: